«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մաթեմատիկա (4-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

1. Բացահայտի՛ր օրինաչափությունը և լրացրու ազատ վանդակը: Գրի՛ր թե որն է օրինաչափությունը: *(2 միավոր)*

45	9
77	14

25	7
36	9

13	4
34	

2. Ստանալ անհրաժեշտ թիվը օգտագործելով թվաբանական գործողության նշաններ ու փակագծեր: *(4 միավոր)*

ա) Վեց հատ 9-ով՝ 100:

_____

բ) Ութ հատ 8-ով՝ 1000:

_____

3. Ունենք չորս կշռաքարեր 10 կգ, 5 կգ, 500 գ և 100 գ զանգվածներով: Որքա՞ն է դդումի, ձմերուկի և խնձորի զանգվածները առանձին-առանձին, եթե նժարավոր կշեռքով կշռելիս ստացվում են հետևյալ արդյունքները, և նժարները հավասարակշռվել են. *(3 միավոր)*

- Կշեռքի մի նժարին դրված է դդում, ձմերուկ և 500գ–անոց կշռաքար, մյուսին՝ 10 կգ–անոց և 5 կգ–անոց կշռաքարեր:
- Կշեռքի մի նժարին դրված է դդում և խնձոր, մյուսի վրա՝ 10 կգ–անոց կշռաքար:
- Կշեռքի մի նժարին դրված է ձմերուկ, խնձոր և 100 գ–անոց կշռաքար, մյուսի վրա՝ 5 կգ–անոց կշռաքար:

4. Վերծանել թվաբանական ծածկագիրը: Միևնույն տառերը պետք է փոխարինել նույն թվանշաններով, իսկ տարբեր տառերը՝ տարբեր: Վերծանված տարբերակը գրել աջ աղյուսակում: Մի քանի նախադասությամբ ներկայացնել վերծանման սկզբունքը: *(3 միավոր)*

Հ	Ա	Յ	Ք
	Հ	Ա	Յ
+		Հ	Ա
			Հ
2	0	0	2

2	0	0	2

5. Աշակերտը ստացել է 13 խնդիր առաջադրանք։ Յուրաքանչյուր ճիշտ լուծված խնդրի համար նա վաստակում է 8 միավոր, իսկ սխալ լուծված խնդրի համար՝ կորցնում 5 միավոր։ Արդյունքների ամփոփումից հետո պարզվեց, որ նա վաստակել է 13 միավոր։ Քանի՞ ճիշտ խնդիր է լուծել աշակերտը։ *(4 միավոր)*

6. Տղան ունի քարտեր, որոնց վրա գրված են 1-ից մինչև 50 թվերը։ Քանի՞ եղանակով կարելի է ընտրել երկու քարտ այնպես, որ քարտերի վրա գրված թվերի տարբերությունը լինի 11, իսկ արտադրյալը բաժանվի 5-ի։ Քարտերի ընտրության հերթականությունը կարևոր չէ. Օրինակ՝ 5 և 16 թվերով քարտերի ընտրության եղանակը, ինչպես նաև 16 և 5 թվերով քարտերի ընտրության եղանակը նույնն են։ *(4 միավոր)*